

ԼԵՂՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Բ. ՉԱՀՈՒԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր

Հայ լեզվաբանական մտքի պատմությունն ընդգրկում է մեկուկես հազարամյակ: Սկսած հույն ֆերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» թարգմանությունից և մեկնություններից մինչև մեր օրերը հայ լեզվաբանությունը առաջ է փառել ու լուծել գրաբարի, միջին հայերենի և ժամանակակից հայերենի կառուցվածքի ուսումնասիրության, հայոց լեզվի պատմության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության բազմաթիվ հարցեր: Առանձնապես բուռն զարգացում է ապրել այն սովետական իշխանության տարիներին: Կարելի է ասել, որ այժմ հայ լեզվաբանությունն ընթանում է Սովետական Միության լեզվաբանության առաջին շարժերում, և նրա շատ արտադրանքներ հայտնի են դարձել Հայաստանի և Սովետական Միության սահմաններից դուրս:

Նախասովետական շրջանի հայ լեզվաբանական մտքի համար բնորոշ էին կենտրոնացածության բացակայությունը և հետաքրքրությունների համեմատաբար նեղ շրջանակը: Այդ միտքը զարգանում էր բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ Պոլսում և Թբիլիսիում, Պետերբուրգում և Մոսկվայում, Կենետիկում և Վիեննայում և այլուր:

Հայ լեզվաբանների հետաքրքրության հիմնական բնագավառներն էին ֆերականությունը և բառաբանագրությունը, համեմատական ֆերականությունը և ստուգաբանությունը, հայոց լեզվի պատմությունը, պատմական ֆերականությունը և բարբառագիտությունը: Քերականությունը հանդես էր գալիս գերազանցապես գործնական ուղղվածությամբ՝ նպատակ ունենալով հայ դպրոցներում և օտարների կողմից հայոց լեզվի ուսումնասիրության պահանջի բավարարումը: Քերականագիտական տեսական լայն հարցեր գրեթե չէին դրվում: Համեմատական ֆերականությունը ներկայացնում էր եվրոպական հայագիտության կցորդը և հազվադեպ էր հանդես գալիս նոր սկզբունքներով ու հարցադրումներով: Համեմատաբար ավելի ինֆեուրոյն էին հայերենի պատմական ֆերականության, հայոց լեզվի պատմության և հայ բարբառագիտության բնագավառները, սակայն հայոց լեզվի պատմության հարցերի ուսումնասիրությունը ամբողջական բնույթ չէր կրում, — մշակվում էին առանձին հարցեր, այն էլ գերազանցորեն բանասիրական և գործնական ուղղվածությամբ, — իսկ բարբառագիտության մեթոդիկան ավանդական բարբառագիտության մեթոդիկայի ընդօրինակումն էր:

Սովետական կարգերի հաստատումը արմատական տեղաշարժեր է առաջ բերում նաև հայ լեզվաբանության բնագավառում: Նրեանը, որ մինչ այդ լեզվաբանական ուրե լուրջ արտադրանք չէր տվել, դառնում է հայոց լեզվի ուսումնասիրության ամենակարևոր կենտրոնը և շատ բնագավառներում ուղղություն է տալիս այլ վայրերի հայագիտական գործունեությանը: Հայոց լեզվի՝ բուհական ուսումնասիրության առարկա դառնալու կսուղակցությամբ աննախընթաց զարգացում է ապրում տեսական միտքը, առաջանում են գիտական հետաքրքրության նոր բնագավառներ: Պատահական չէ, որ նախաձեռնող գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կազմակերպումը հայ լեզվաբա-

նակաւն մտքի հիմնական նվաճումները կապված էին բունների և հատկապես համալսարանի հետ: Այստեղ էին գործում նշանավոր լեզվաբաններ Հր. Ահառյունը, Մ. Արեղյանը, Գր. Ղափանցյանը, որոնք հետագայում դառնում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին անդամները: Նրանց կողքին և հանախ նրանց ղեկավարությամբ գործում է նաև լեզվաբանների մի սերունդ, որի գործունեությունը սկսվում է հենց սովետական տարիներին՝ Ա. Ղարիբյան, Գ. Սևակ և ուրիշներ:

Լեզվաբանական լայն աշխատանք է ծավալվում տեսական և գործնական բազմաթիվ հարցերի լուծման ուղղությամբ: Դպրոցական և բունական դասագրքերի ստեղծում, ուղղագրության բարեփոխում և տեղիներաբանական հարցերի մշակում, ընդհանուր լեզվաբանական և հայերենագիտական մի շարք կարևոր մենագրություններ ու հոդվածներ, — այդպիսին է այդ գործունեության հիմնական արդյունքը: Մասնավորապես նշելի են Հր. Ահառյանի «Հայերեն արմատական բառարանը» (I—VII հհ., 1926—1933), «Հայոց լեզվի պատմության» (I մասը 1940, II մասը՝ 1951) և բարբառագիտական մենագրությունները, Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» (1931), Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» (1937 և 1939), Ա. Ղարիբյանի բարբառագիտական աշխատանքներն ու դպրոցական դասագրքերը, Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսությունը» (1939) և «Հայոց լեզվի շահանջություն» դպրոցական դասագիրքը և այլն:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպման հենց սկզբից՝ 1943 թ. ստեղծվում է լեզվի ինստիտուտը՝ ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտի բազայի վրա: Լեզվի ինստիտուտի կազմում սկզբնապես գործում էին երեք բաժին (ժամանակակից հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության, բառարանագրության) և Ն. Յա. Մառի անվան կալիինետը՝ աշխատակիցների ոչ այնքան մեծ թվով: Աստիճանաբար ծավալելով իր աշխատանքները՝ լեզվի ինստիտուտը դառնում է հայոց լեզվի ուսումնասիրության ամենախոշոր կենտրոնը: Այն ուղղություն է տալիս հանրապետության լեզվաբանական կենտրոնների գործունեությանը և արժանի հեղինակություն վայելում Սովետական Միությունում ու նրա սահմաններից դուրս: Այժմ ինստիտուտի կազմում կան հինգ բաժին (բացի նախորդներից նաև ընդհանուր լեզվաբանության և տեղիներաբանության բաժինները), մեկ ամբիոն (օտար լեզուների), վոլոնտերական հնչյունաբանության լաբորատորիա և ընդարձակ բառարան: Ինստիտուտն ունի 50 գիտական աշխատակից (այդ թվում 7 դոկտոր և մոտ երեք տասնյակ թեկնածուներ), երկու տասնյակի հասնող գիտատեխնիկական և գիտաօժանդակ անձնակազմ:

Գիտական աշխատանքների ընդհանուր ուղղվածության առումով լեզվի ինստիտուտի գործունեության մեջ կարելի է տարբերել երկու փուլ. ա) 1943—50 թթ. լեզվի ինստիտուտի գիտական միտքը առաջնորդվում է Ն. Յա. Մառի լեզվի «նոր ուսմունքի» հիմնական սկզբունքներով, նպատակ է դրվում ինստիտուտի ողջ աշխատանքները կազմակերպել այդ ուսմունքի դրույթների հիման վրա. բ) 1950—1970 թթ., սովետական լեզվաբանության մեջ Ն. Յա. Մառի գիտական սխալ սկզբունքների և, ավելի ուշ, անհատի պաշտամունքի հետեւանքների հաղթահարման հետ կապված լեզվի ինստիտուտը աշխատում է իր գիտական գործունեության մեջ վերացնել մարքսիզմի գոեհեկացման և դոգմատիզմի տարրերը, ֆենադատաբար օգտագործել ու զարգացնել լեզվաբա-

նական ժառանգությունը, հայոց լեզվի ուսումնասիրության մեջ կիրառել ժամանակակից գիտության մեթոդներն ու սկզբունքները:

Լեզվի ինստիտուտի գործունեության մեջ առանձնապես մեծ կշիռ ունի ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրությունը: Այս բնագավառում հանդես են գալիս ինչպես ընդհանրացնող, այնպես էլ հայոց լեզվի կառուցվածքի առանձին կողմերին նվիրված շատ աշխատություններ: Ժամանակակից հայոց լեզվի պատմության հարցերին են նվիրված Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմությունը» (1948), Ս. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզուն և ուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման գործում» աշխատությունը (1955), Ս. Գալստյանի «Ժամանակակից հայերենի պատմության ակնարկները» (1963), այլև «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» կոլեկտիվ մենագրությունը (1970):

Մեծ թիվ են կազմում ձևաբանության հարցերին նվիրված մենագրություններ՝ Ս. Աբրահամյան «Բայր ժամանակակից հայերենում» (I հ., 1962), Ս. Աբրահամյան «Արդի հայերենի դերանունները» (1956), «Զբեմվող խոսքի մասերը և նրանց բառական ու բերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» (1965), Վ. Առաքելյան «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957), «Հայերենի պարբերությունը» (1968), Հ. Պետրոսյան «Գոյականի առումները հայերենում» (1960), Գ. Գարեգինյան «Շաղկապները ժամանակակից հայերենում» (1963) և այլն:

Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսությունը» (I հ., 1958, II հ., 1964) շարահյուսության բնագավառի ամենահանգամանակից աշխատանքն է: Հիշատակելի են նաև Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության մի փանի հարցերը» (1962), Ն. Պառնասյանի «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961), «Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում» (1964), «Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայոց լեզվում» (1970) աշխատությունները:

Ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և բառակազմության հարցերին են նվիրված Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» (1955), Ս. Էլոյանի «Ածանցները ժամանակակից հայերենում» (1963):

Վերջին ժամանակներս աշխատանք է տարվում լեզվաբանական նոր մեթոդները ժամանակակից հայերենի նկատմամբ կիրառելու ուղղությամբ: Կառուցվածքային մեթոդների կիրառման աչքի ընկնող փորձեր են էդ. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովում և խոնարհումը» (1967) և է. Միրաբյանի «Ինզվեի հիպոթեզի ստուգումը հայերենի նյութի հիման վրա» (1968):

Հայերենի հնչյունական կառուցվածքի փորձառական ուսումնասիրության ասպարեզում կարևոր ներդրում են Ա. Արամյանի «Ժամանակակից հայերենի ձայնավորները» (1963), Ա. Խաչատրյանի և Վ. Հայրապետյանի «Ժամանակակից գրական հայերենի բաղաձայնները» (հանձնված է տպագրության):

Լեզվի ինստիտուտն այժմ աշխատում է ժամանակակից հայերենի գիտական բերականության վրա, որի երեք հատորներն ամփոփելու են արդի հայերենի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքները և տալու են այդ կառուցվածքի ծավալուն նկարագրությունը:

Եղանակալից աշխատանք է կատարված հայոց լեզվի պատմա-համեմատական ուսումնասիրության բնագավառում: Այստեղ առաջին հերթին հիշատակելի է Հր. Անաոյանի «Լիակատար ֆերականություն հայոց լեզվի» բազմահատոր աշխատությունը, որի 6 ծավալուն հատորներում (1952—1965) տրվում է հայերենի տիպաբանական զուգադրությունը 562 լեզվի հետ, ապա նրա ֆերականական կառուցվածքի պատմությունը՝ հնդեվրոպական միասնության շրջանից մինչև մեր օրերը: Գր. Ղափանցյանի աշխատությունները հատուկ արժեք են ներկայացնում հայերենի և Առաջավոր Ասիայի լեզուների հնագույն կապերի ուսումնասիրության տեսակետից: Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփված են նրա «Պատմա-լեզվաբանական աշխատությունների» I հատորում (1957) և «Հայոց լեզվի պատմության» մեջ (1961):

Հայոց լեզվի պատմության առանձին շրջանների և առանձին բնագավառների ուսումնասիրության ասպարեզում պետք է նշել Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953), Ս. Ղազարյանի «Միջին հայերենը» (I հ., 1960), Էդ. Աղայանի «Գրաբարի ֆերականությունը» (I հ., 1964): Արդեն տպագրության են հանձնված «Միջին հայերենի պատմություն» կոլեկտիվ մենագրության երկու հատորները և Վ. Անեմյանի «Արևմտահայ գրական լեզվի կազմավորումը» մենագրությունը: Այժմ ինստիտուտի լեզվի պատմաբաններն աշխատում են «Հայերենի պատմական ֆերականության» վրա:

Լեզվի ինստիտուտի գիտական արտադրանքի մեջ մեծ տեղ են գրավում բարբառագիտական ուսումնասիրությունները: Հայ բարբառների դասակարգման և պատմական զարգացման մի շարք կարևոր հարցեր լուծելու հետ միասին բազմաթիվ մենագրություններ են նվիրվում առանձին բարբառների ուսումնասիրությանը՝ Հր. Անաոյան «Քննություն Համշենի բարբառի» (1947), «Քննություն Առտիալի բարբառի» (1953), Ա. Ղարիբյան «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր հյուղ» (1958), Էդ. Աղայան «Մեղրու բարբառը» (1954), Հ. Մկրտչյան «Կարնո բարբառը» (1952), Վ. Պետրոսյան «Սասունի բարբառը» (1954), Ս. Բաղդասարյան «Մշո բարբառը» (1958), Ռ. Բաղդամյան «Դերսիմի բարբառային ֆարտեզը» (1960), «Կոզենի բարբառը» (1961), «Շամախի բարբառը» (1964), Ա. Պողոսյան «Հաղրութի բարբառը» (1965), Ս. Անթուսյան «Կեսարիայի բարբառը» (1961), Հ. Մուրադյան «Կարհնանի բարբառը» (1960), «Կաֆավաբերդի բարբառը» (1967), Կ. Դավթյան «Լեռնային Ղարաբաղի բարբառային ֆարտեզը» (1966), Հ. Դասպարյան «Հաջընի բարբառը» (1966), Թ. Դանիելյան «Մալաթիայի բարբառը» (1967): Վերջին ժամանակներս ինստիտուտն ավարտել է Արարատյան բարբառի համակողմանի ուսումնասիրությունը (արդյունքները կհրատարակվեն առանձին պրակներով) և ձեռնարկել է հայերենի գավառական ընդարձակ բառարան կազմելու աշխատանքը:

Լեզվի ինստիտուտը հասարակությանը հայտնի է հատկապես իր բառարանագրական գործունեությամբ: Այս բնագավառի աշխատանքներից առանձնապես կարևոր են «Ռուս-հայերեն բառարանը» (I—IV հհ., 1954—1958) և «Արդի հայերենի բացատրական բառարանը», որի առաջին հատորն արդեն լույս է տեսել (մնացած 4 հատորները լույս կտեսնեն առաջիկայում): Մյուս կարգի աշխատանքներից նշենք Ա. Քոչոյանի «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարանը» (1963), Ա. Սուփասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բա-

նարանը» (1967), Ս. Գալստյանի, Թ. Ղարազյուլյանի և Հ. Պետրոսյանի «Լեզվաբանական բառարանը», Լ. Պետրոսյանի «Հ. Թումանյանի գեղարվեստական երկերի բառարանը» (տպագրվում են), «Հայ-ռուսերեն բառարանի» երկու հատորները (խմբագրության պրոցեսում են):

Հայ բառարանագրության անցած բազմադարյան ուղու պատմությունը տրված է Գ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» աշխատության մեջ (1968):

Ինստիտուտի գոյության ողջ ընթացքում նրա ուղարկության կենտրոնում է եղել գիտական կադրերի պատրաստման հարցը: Ինստիտուտում կողմ-կողմի աշխատում են ավագ, միջին և կրտսեր սերնդի ներկայացուցիչներ: Գիտական կադրերի պատրաստման հիմնական օղակը ասպիրանտուրան է, որ կադրեր է պատրաստում ինչպես հայագիտության համար ավանդական դարձած, այնպես էլ նոր զարգացող մասնագիտությունների գծով: Վերջին տարիներս լեզվի ինստիտուտն ասպիրանտներ է պատրաստել կամ պատրաստում ժամանակակից հայերենի, հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, գրաբարի, ընդհանուր, կառուցվածքային և կիրառական լեզվաբանության, համեմատական էթնոլոգիայի, դասական բանասիրության և ֆիննա-ուգրագիտության բնագավառներում: Այժմ ինստիտուտն ունի մեկ տասնյակից ավելի ասպիրանտներ, որոնց ղեկավարությունն իրականացվում է ինչպես տեղի, այնպես էլ Մոսկվայի ու Լենինգրադի լավագույն մասնագետների միջոցով: Մեկ ասպիրանտ՝ ֆիննա-ուգրագետը, իր ուսումնառությունն անցկացնելու է Հունգարիայում:

Կադրերի պատրաստման բնագավառում զգալի տեղ է տրվում նաև հեռակա ուսուցմանը: Հեռակա կարգով սովորում, թեկնածուական միևնույնի առարկաները հանձնում և դիսերտացիա են պաշտպանում զգալի թվով մասնագետներ: Լեզվի ինստիտուտն այժմ ունի աստիճաններ շնորհող գիտական խորհուրդ, որտեղ պաշտպանվում են դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ: Այս միջոցառումների շնորհիվ ինստիտուտի կազմը վերջին տարիներս զգալիորեն «երիտասարդացել» է. գիտական աշխատանքի մեջ զգալի կշիռ ունեն երիտասարդ գիտաշխատողները, որոնք հաջողությամբ մշակում են ինֆեռուրույն և կոլեկտիվ թեմաներ:

Ինստիտուտը գիտական սերտ կապերի մեջ է գտնվում Սովետական Միության և արտասահմանի լեզվաբանական-հայագիտական կենտրոնների և լեզվաբան-հայագետների հետ: Ինստիտուտի աշխատակիցների մի շարք աշխատություններ տպագրվել են Մոսկվայում, Թբիլիսիում, Փարիզում, Վենետիկում, Հռոմում. Պրագայում: Իր գոյության տարիներին ինստիտուտն ակտիվորեն մասնակցել է համամիութենական և համաշխարհային շատ խորհրդակցությունների, կոնֆերենցիաների և նստաշրջանների աշխատանքներին: Առանձնապես նշելի է ինստիտուտի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը ՍՍՀՄ-ում լեզվաբանության զարգացման հարցերին նվիրված համամիութենական նստաշրջանին (1957), արևելագետների XXV միջազգային կոնգրեսին (1960), բարբառագիտական համամիութենական խորհրդակցություններին (1958, 1959, 1969), տերմինաբանական համամիութենական նստաշրջաններին (1959, 1970), ՍՍՀՄ ժողովուրդների լեզուների զարգացման օրինաչափություններին և հեռանկարներին նվիրված համամիութենական խորհրդակցություններին (1962, 1965), հնչույթաբանների Պրագայի կոնգրեսին

(1967), օտար լեզուների դասավանդման հարցերին նվիրված XV գիտա-մեթոդական նստաշրջանին (1967) և այլն:

Ինստիտուտում եղել և գիտության կարևոր հարցերի շուրջը զեկուցումներ են կարդացել Խրեան ժամանած նշանավոր շատ լեզվաբաններ և հայագետներ՝ Ֆ. Ֆեյդին (Ֆրանսիա), Զ. Բուռնիեզին (Իտալիա), Վ. Վինտերը (ԱՄՆ), Պ. Յունգմանը (ԴՖՀ), Վ. Սկալիշկան, Կ. Հորալեկը, Լ. Մոտալովան (Չեխոսլովակիա), Վ. Բրենցյանուն (Ռումինիա), Լ. Բենեֆյուն, Է. Շյուցը, Կ. Շանդորը (Հունգարիա), Վ. Ն. Յարցևսկին, Է. Ա. Մակաևը, Վ. Վ. Իվանովը, Կ. Ս. Շահումյանը, Վ. Ա. Արտյոմովը (Մոսկվա) և ուրիշները:

Մեծ նշանակություն ունի այն աշխատանքը, որ կատարում է ինստիտուտը Հայաստանի լեզվաբանական կենտրոնների աշխատանքը կոորդինացնելու ուղղությամբ: Այս տեսակետից կարևոր դեր են խաղում պարբերաբար կազմակերպվող համատեղ նստաշրջաններն ու գիտական բանավեճերը: Առանձնապես պետք է նշել ժամանակակից հայոց լեզվի հոլովների և խոնարհման հարցերին նվիրված դիտական ծավալուն բանավեճերը, որոնք լայն հետաքրքրություն առաջացրին հասարակության մեջ:

Լեզվաբանության ժամանակակից փուլը բնութագրվում է մի կողմից՝ գոյություն ունեցող բնագավառների ավելի խորացված ուսումնասիրությամբ, մյուս կողմից՝ գիտական նոր ուղղությունների առաջացմամբ ու նոր մեթոդների արժանատվորմամբ: Զարգացման այս երկու տեղեկեցները մեր առջև դնում են համապատասխան խնդիրներ: Շարունակում է առաջնահերթ կարևորություն ունենալ հայ լեզվաբանների, այդ թվում և լեզվի ինստիտուտի աշխատակիցների գիտական արտադրանքի որակի բարձրացումը, գիտական նոր մեթոդների և ուղղությունների տիրապետումը, այդ ուղղությունների գծով գիտական կադրերի պատրաստումը: Միաժամանակ խիստ անհրաժեշտ է դառնում ուժեղացնել կոորդինացիան բնական և հասարակական գիտությունների տարբեր բնագավառների հետ: Առանց կիրքոնեցողների, մաթեմատիկոսների, ֆիզիկոսների, ֆիզիոլոգների, վիրիսոլոգների, հոգեբանների հետ լուրջ կոնտակտ հաստատելու անհնար է լուծել մաթեմատիկական լեզվաբանության, փորձառական հնչյունաբանության, խոսքի հոգեբանության և մի շարք այլ կարևոր բնագավառների գիտական հարցեր: Շատ անելիքներ կան Առաջավոր Ասիայի հին լեզուների, հնդկական դասական և ոչ հնդկական լեզուների գծով գիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ:

Գիտական աշխատանքի որակի հետագա բարձրացում, լեզվի ավելի խորացված ուսումնասիրություն, նոր ուղղությունների ու մեթոդների հմուտ իմացություն ու կիրառում, լեզվաբանական աշխատանքի մշտական և արդյունավետ կոորդինացիա՝ բնական և հասարակական տարբեր գիտությունների հետ, գիտական նոր, որակյալ կադրերի պատրաստում բոլոր կարևոր ուղղություններով, — ահա այն խնդիրները, որոնց կատարումը կապահովի հայ լեզվաբանների կայուն տեղը արդի առաջավոր գիտության մեջ: